

որ ինձնից շուտ առաջ այնտեղ վերև թռան, գնացին ու Քեզ տեսա՛նք։

Բերանդ փակիր, ո՛վ մարդ, քո շատ յանդուգն խելքովդ, ու ծուկը դիր մանկահան պարզ սրտով ստեղծարար Հորդ առաջը։— Դեռ ևս ապրում եմ ես այս աշխարհիս վերայ հոգ դառնալու մարմնովս։— Ա՛հ, ինչ էի ես մինչև ցայժժ, — Ի՛նչ պէս անարժան կերպով, ի՛նչպէս սխալանքներով լի էի ես իմ կեանքիս ամե՛ն օրերումն։ Աւ ի՛նչ եմ այժմս էլ։— ո՛վ Աստուած, ի՛նչպէս կարող եմ ես համարձակ դէպի վեր Քեզ մտիկ տալ, ի՛նչպէս կարող եմ ես գերագոյն բանին յոյս ունենալ։ Միայն մաքուր սիրտ ունեցողներն են, որ Քեզ կտեսնեն։ Ա՛հ թափանցի իմ սրտիս մէջ Քո սուրբ Հոգւոյդ զօրութիւնն, որ ես չդադարեմ ինձ մաքրելու այն ամեն բանից, ինչ որ իմ մէջս մեզ քից ազատ չէ ու անկատար է, մի ներ, մի աւելի լաւ մարդ լինիմ ես իմ պանդխտութեանս, իմ այս անցաւոր աշխարհիս մէջ անցկացնելու ժամանակաւոր կեանքիս այս օրը, մաքուր հոգւով գնամ իմ կեանքիս ճանապարհն. երանի ինձ, երբ որ ինքս ինձ յաղթեմ ու յաղթող դուրս գամ այս աշխարհիցս. երանի ինձ, երբ որ ես էլ մի օր իմ մահուանս անկողինքի մէջ՝ արած յաղթութեանս վերայ՝ ուրախ սրտով կարողանամ ասել իմ սրտիս մօտիկ բարեկամներին՝ Երանի՛ նորանց, որ մաքուր սիրտ ունին, ինչպէս որ նոքա Աստուած կտեսնեն։

(Թ. ար. գ. Գերմաներէնէն) Գրիգոր Նախկապոս Աղափիրեանց.

ՃԱՌ ԱՍՏՅԵԱԼ ՅԱՒՈՒՐ ՏՕՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ  
ՍՐԲՈՒՀՒՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

• Մեր բնակ—Ռե—նը երկն—ս—ն է •

Արդեօք իսկ այս չէ՞ հասկացնում ու սորվեցնում մեզ, ո՛վ քրիստոնեայք, սուրբ եկեղեցւոյ ներկայ հանդէսը. հէնց նայնք չէ՞ իսկապէս հաւատացնում մեզ Աստուածամօր վերափոխումն։ Աւ ճշմարիտ. երկրաւոր կեանքը քրիստոնէի կեանքի նպատակը չէ, այլ միայն ճանապարհը դէպի նպատակն։ Այստեղ մենք մեր տանը չենք, այլ մեր տուն գնալու ճանապարհի վրայ ենք. այստեղ մենք ոչ թէ վայելչութիւններ ենք քաշում, այլ միայն աշխատում ենք. ոչ թէ հանգստանում ենք, այլ իբրև

զինուորներ մեր զինուորութիւնն ենք անում, չենք հնձում, այլ ցանում ենք: Այս աշխարհիս վերայ մենք պանդուխտ ենք և անցաւոր: Մեր բնակարանը երկնքն է:

Աւրեմն, եթէ մեզ համար մեծ նշանակութիւն և օգուտ ունի գիտենալը ճիշտ կերպով գին դնել մեր կենաց օրերին և խոհեմութեամբ օգուտ քաղել մեր ունեցած կեանքից, որ սերմանենք հնձելու համար, այսպէս և ոչ պակաս մեծ նշանակութիւն և օգուտ ունի այս գլխից կազմել մեզ համար ուղիղ գաղափար այս աշխարհիս վերայ մեր ունեցած կեանքի մասին:

Ի՞նչ է մեր կեանքը: — Իէպի իւր հայրենիքը գնացող անցաւոր ճանապարհորդի պանդխտութեան տեղն է: Այս ճշմարտութիւնն ինքն Աստուած յայտնել է մի ժամանակ Եսայիին. Ի՞նչ է երկրն և զո՞ւր ի՞նչ անպտուղ անպտուղներ ու հիւրեր է: Մենք, մեր օրօրոցից սկսած, գնում ենք առանց կանգ առնելու, դէպի գերեզման, և անց ենք կացնում մեր մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան, այրութեան և ծերութեան տարիքը՝ ճանապարհորդների նման, որ անց են կենում առաջ կանաչազարդ և ծաղկաշատ դաշտերով, յետոյ՝ իւր կանաչ գոյնը՝ դեղինի փոխած, հասունացած քաղմաբեղուն հասկերի միջով, վերջապէս ամայի ու տկլոր տեղերով: Գնում ենք, և հանդիպում զանազան զժուարտութիւնների և անյարմարութիւնների՝ ճանապարհորդների նման, որոնք պատահում են ճանապարհում լեռնոտ, ճահճոտ և աւազուտ տեղերի: Գնում ենք, ու քաշում տեսակ տեսակ դառնութիւններ, նեղութիւններ՝ ճանապարհորդների նման, որք ենթարկւում են՝ երբեմն քաղցի ու ծարաւի, երբեմն էլ՝ ցրտի և տոթի: Երկար ժամանակ գնալով մեր ճանապարհն ի՞նչն ու ինչն ենք յիշում՝ արդեօք այդ միջոցին մեզ պատահած բաներից. շատ բան արդեօք գիտենք կեանքի մէջ մեր տեսածներից, որոնք զարմացնում էին մեզ, կամ մեր սիրտն դէպի իրանց քաշում: մեզ գրաւելով, կամ վշտացնում էին ու տիրեցնում, մեթ սրտին ծանր հարուած ու խոր վէրք գնելով: Ամէն բան գալիս է մեր առաջն իբրև մի նոր բան, և ամեն բան մնում է մեր յետևն՝ իբրև մի հին բան, ամեն բան մեր առաջն է գալիս իբրև մեր աչքին միայն երևցող մի բան, և ամեն բան անց է կենում գնում իբրև մի երազ:

Ի՞նչ է մեր կեանքը: Պատկերի պէս ման գալ է: ստուերի նման անց կացող մի բան է. Ապա+էն է պատկերի շքե մարդ, այսինքն է՝ ստուերի նման ման եկող մի պատկեր է մարդս, ասու մէ Մարգարէն: Նրջում ենք մենք պատկերի պէս մեր մըաքերի մէջ, որովհետեւ մեր խելքը ճշմարտութիւն է պտոււ մ ու չէ գտնում. Ինչու որ կասկածներն անբաժան հետն են միշտ: Մեր սրտի մէջն էլ պատկերի նման ենք շրջում, Ինչու որ ցանկանում ենք վայելել բարիք՝ և չենք վայելում, որովհետեւ միայն յոյսերն են ուղեկից լինում մեզ մեր ունեցած ցանկութիւններին հասնելու ճանապարհում: Նրջում ենք պատկերով մարմնոյ մէջ. որովհետեւ մեր այքի առաջ փոխվում է մեր հողեղէն պատեանը. հիւանդութիւններն ու մահը սպառնում են մեզ: Նրջում ենք պատկերով բնական աշխարհում, Ինչու որ երկիրս անգագար շարժվում է: Նրջում ենք պատկերով քաղաքական աշխարհի մէջ, Ինչու որ մահն այդ տեղ էլ փոխում է մարդկանց, ու ժամանակը ներս բերում նոր Նոր կարիքներ և այլն: Բայց որտեղ էլ որ շրջում ենք, ոչ մի տեղ էլ չենք գտնում մի յաւիտենական, մի մնայուն բան, որ կարող լինէր յագուրդ տալ մեր հողւոյն՝ և այս անհայտ անհայտութիւն է և արտա-նի-ն հագայ:

Ի՞նչ է մեր կեանքը: Պատերազմի դաշտ է, որոյ վերայ մարմինը պատերազմում է հողւոյ հետ: Մարդս ծնում է բարի և չար հակումներով, մի քանիսը մեզ քաշում են դէպի երկինք, միւսները՝ ձգում են դէպի երկիրս: Մի քանիսը բարձրացնում են ու ազնուացնում մեզ, միւսները ստորացնում ու խայտառակում: Մի քանիսը խաղաղութիւն ու հանգստութիւն են բերում մեր խղճմտանքի մէջ, միւսները՝ վրդովում ու խանգարում մեր սրտի անդորրութիւնն, և այս իրար հակառակ գործողութիւններն յառաջ են գալիս մեր մէջ միշտ և անգագար: Ի՞վ էր և ինչ մարդ էր Առաջ եւ Նա Պողոս: Նա էլ է գանգատվում այս պատերազմի վերայ. Կենսում է՛նա, արիւն օրէն+ ի՛նչ անգամներն ի՛նչ, որ ընդդէմադրում են ի՛նչ երկե-օրէն+ներն:

Ի՞նչ է մեր կեանքը: Ղշտերի ու չարչարանքների ճանապարհ է. Եղե՞լ է արդեօք աշխարհիս վերայ երբէք այնպիսի մի բաղաւոր մարդ, որ անցկացրած լինի իւր բոլոր կենաց տարիքն:

ոչ մի բանից չվշտանալով և ոչ մի բանից չքարշարուելով: Այն եղել է, ոչ էլ պիտի լինի: Այլ որ անօրէնութեամբ է յղացուել և մեղքի մէջ ծնուել, նա չէ կարող վշտերից ու չարչարանքներից ազատ մնալ: Այլ որ ինքը գլխից մինչև ոտը մարմնացած կարիք ու կարօտութիւն է, տկար ու անզօր արարած է, նա չէ կարող չզգալ զրկանք, ու չունենալ պակասութիւններ: Այլ որ ժամանակաւոր և անցաւոր բաների շրջանի մէջ է դրուած, չէ կարող ունենալ մշտական անփոփոխ սերտութիւն: Այլ որ ապրումէ մարդկանց մէջ, որոնք որ ալեկոծվում են իրանց տակն ու վրայ անող կրքերից, այն մարդը չէ կարող չպատասխանախորժութիւնների: Կսկ ինչ է մեղնից, որ տկարութեան ենթարկուած չէ, կամ մեղքից ու կրքերից ազատ է, և ուրեմն ինչ է, որ քիչ՝ կամ շատ վիշտ չէ քաշում, չէ լաց լինում, չարչարանքի մէջ չէ ու թշուառութիւն չէ կրում:

Ի՞նչ է մեր կեանքը: Մեր կեանքը գործելու ժամանակ է: Մենք գործում ենք Յիսուսի Քրիստոսի թագաւորութեան մէջ և ինքներս էլ Նորա ձեռքի գործն ենք: Նա անում է մեզ իւր սրգիքը, սեպհականեցնելով մեզ իւր ունեցած արդիւնքն. իսկ մենք պէտք է շատ աւելացնենք մեր ունեցած հաւատը դէպի Նա, այդպէս արդարացնելով Նորանով մեր նոր մարդ լինելը մեր բարի գործերով: Նա հաղորդում է մեզ սրբութեան, ճշմարտութեան և իմաստութեան մէջ յառաջանալու միջոցներն: իսկ մենք պէտք է աճեցնենք այս աստուածային պարգևները՝ Նորա ճանապարհով գնալով: Նա սերմանողն է, իսկ մենք Նորա արտերը պէտք է լինինք: Եւ այց մենք էլ պէտք է լինինք ոչ պակաս բարին սերմանողներ առաւօտից մինչև երեկոյ, որպէս զի յաւիտենական կենաց մէջ հնձենք քաղցր պտուղներ:

Ահա մեր երկրաւոր կեանքի խորհուրդն, ահա ինչպէս պէտք է հասկանանք, թէ ինչու համար ենք ապրում: Այդպէս էր նայում մեր ունեցած մարդկային կեանքի վերայ թագաւոր մարգարէն. Վայ ինչ, երկաթ եղան իմ պանդխտութիւնս: Երբ պիտի գամ, երբ իմ Սասուն-ժոյղ երեսն առաւ: Այդպէս էր նայում մեր այս աշխարհումն ունեցած կեանքի վերայ Պօղոս Առաքեալն. Ինչ իզճապի ճարդ իմ էս, ինչ պիտի է աղապի ինչ այս մահկանացոս ճարձիցս: Այդպէս էին նայում Աստուծոյ բոլոր սուրբերն որոնք որ դատապարտուած էին իսպեալ Տիրոջ թշնամիներից ամե-

նախիստ շարշարանքներ կրելու և այդպիսի մահով մեռնելու։  
 Եւ ի՞նչպէս ուրիշ կերպ կարող ենք նայել այս կեանքի վերայ։  
 Ինչո՞ւ համար է մեզ տուած մեր կեանքը։ Մի՞թէ նորա համար  
 միայն, որ վայելենք այն ամենայն բարիքն, որ Աստուած այն-  
 պէս առատօրէն պարգեւել է մեզ, մեր երկրաւոր բնակու-  
 թեան սեղն ամեն տեսակ լաւ՝ և մեզ համար օգտակար բանե-  
 րով լցնելով։ Այ, դորա համար չէ տուած մեզ մեր կեանքն,  
 այլ ծնել ենք մենք նորա համար, որպէս զի միշտ ապրենք,  
 միշտ աճենք, բարձրանանք աւելի և աւելի դէպի վեր—դէպի  
 սկիզբն ու վերջն ամենայն արարածների։ Մեր երկրաւոր  
 կեանքն ապագայ մեր կեանքի նախազաւթն է միայն։ Երկրա-  
 ւոր մեր երջանկութիւնն՝ մեր երկնաւոր երջանկութեան նա-  
 խաճաշակն է միայն։ Մարդս այս ժամանակաւոր կեանքումս  
 չէ կարող ունենալ երկրիս վերայ՝ ոչ կատարեալ գիտութիւն,  
 ոչ անսխալ բարի կամք և ոչ անվրդով երջանկութիւն։ Եր-  
 կիրս չէ լրացնում մեր հոգւոյ պահանջները, չէ համապատաս-  
 խանում նորա անդուլ և անդադար ցանկութեան, որով սար-  
 վում է դէպի առաքինութիւն, և չէ հասցնում նորան  
 մխիթարութեան ու չէ քաջալերում, օգնելով նորան։

Եւ ի՞նչպէս կարելի է այս անցաւոր աշխարհիս վերայ գտնել  
 ոյժ, քաջալերութիւն, օգնութիւն, և նպատակն բոլոր բարձր  
 ու վսեմ ձգտումների, որուն մարդս ընդհանրապէս՝ և քրիս-  
 տոնեայն՝ առանձնապէս ընդունակ է։ Ի՞նչպէս կարող է տե-  
 սանելի աշխարհս ինքը բաւականութիւն տալ իրանով նորա  
 անվերջ ցանկութիւններին, նորա անմահ հոգւոյ խորին և  
 սուրբ ձգտումներին։ Հոգին բարձր է մարմնից, ինչպէս որ  
 երկինքը բարձր է երկրից, ինչու որ հոգին ազգական է հոգե-  
 ւոր աշխարհի հետ։

Աւրեմն, եթէ մեր հայրենիքն երկնքումն է, կարիք չկայ մեր  
 մտքերն ու ցանկութիւններն երկրիս հետ և նորա բարեացն  
 ու վայելչութեանց հետ կապելու։ Երկրաւոր ուրախութիւն-  
 ները, փայլուն օսկին, մեծահռչակ փառքն, երևելի տիազոս-  
 ներն ու մեծարանքներն, որ ձեռք են բերուած մեծամեծ աշ-  
 խատութիւններով, նշանաւոր քաջագործութիւններով՝ կամ  
 մեծագործութիւններով, այն, ուշադրութեան արժանի են.  
 բայց չի արժիլ, որ երկար կանգնենք, նայենք այդ բարեմաս-

նութիւնների վերայ: Այն օրդին, որ իւր ծնողաց տունն է շտապում գնալ, հասնել, ժամանակ չունի լաւ մտիկ տալ ճանապարհին պատահած ամեն մի գեղեցիկ ծառի վերայ ու ամեն մի ծաղիկը գիտել: — Ինչ որ պարգևած է մեզ վերին Տեսչութիւնն, այն էլ պէտք է գործ անենք շնորհակալութեամբ, բայց երբէք պիտի անուշազիր ու անփոյթ չլինինք, և չնեղենք մեր հոգին ունայն հոգսերով, որ շնորհանք թէ՛ մեր բնակութիւնը երկնքումն է:

Մի նեղասրտիլ, սիրելիս, որ ներկայ կեանքի ճանապարհը նեղ է ու դժուարին: Քո կեանքիդ ընթացքի սէջ հետդ միասին եկող երեք սուրբ ընկերներ ունիս: — Իորանցից մէկը՝ քեզ համար իւր մի ձեռքումը բռնած ունի պսակ, միւս ձեռքով ցոյց է տալի երկինքը, — այս մէկն ընկերներիցդ՝ հաւատն է, երկրորդը՝ հանգարտ ու հանգիստ նայուածքովն, ուրախութիւնով ու սրտիդ խաղաղութիւնը բերող կերպով ողջունում է քեզ ու քաջալերում, — այս երկրորդ ընկերդ՝ յայն է, երրորդը՝ հեղութեամբ և ընկերսիրաբար իւր գիրկը բացած է գէպի քեզ, — այս երրորդ ընկերդ՝ սէրն է: Երկնից այս երեք դստերաց առաջնորդութեամբը պարզ և հանգիստ սրտով գնա՛ — քեզ համար որոշուած ճանապարհովն: Եւ որչափ որ աւելի սերտ ու բարեմտութիւնով լինի քո նորանց հետ ունեցած ընկերակցութիւնդ ու հաղորդակցութիւնդ, այնքան աւելի ապահով կերպով կհասնես քո նպատակիդ: Եւ այնտեղ, ուր որ փայլում են հեռուում, բարձրում երկնային մարմինների միլիոնաւոր աշխարհներ, այնտեղ՝ և աւելի բարձրումը, աւելի հեռուումը, աւելի խոր տեղումն, այնտեղ անսահմանութեան մէջ, յաւիտենականութեան մեջ՝ այն տեղ է քո երկինքը, քո իսկական հայրենիքն: Ամէն:

(Թաշգ.Ն. Ռոստ.) Կարապետ Գ. Տէր Յակոբեանց Ազացի: